ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/29685-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-274-25.05.2022-ԱՌՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1016- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան

Հեռ. 010515403 077787821

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ (Պ-274-25.05.2022-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային ժողովի պատգամավորներ Ն. Զեյնալյանի և Լ. Բաղալյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Պ-274-25.05.2022-ԱՌՀ-011/0) (այսուհետ՝ նախագիծ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

Նախագծի վերնագրում «լրացումներ» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով կատարվում է մեկ լրացում: Ըստ այդմ, նախագծի հիմնավորման մեջ նույն փոփոխությունը կատարելու անհրաժեշտություն կառաջանա:

Նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացման մեջ «վարձատրությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «աշխատավարձը» բառով:

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորումն անհրաժեշտ է նախատեսել որպես 33-րդ հոդվածի առանձին՝ 2.1-ին մաս:

Նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «ստաժը,» բառը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթե տվյալ ժամանակահատվածում պահպանվում է աշխատատեղը և վարձատրությունը, ապա նշված ժամանակահատվածն արդեն իսկ աշխատողի համար աշխատանքային ստաժ է համարվում: Մասնավորապես՝ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված է, որ աշխատաժամանակը ներառում է՝ աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում որակավորման բարձրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

Հետևաբար, անհրաժեշտ է առաջարկվող դրույթը վարձատրության մասով խմբագրել:

Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացը իրականացվում է հնգամյա ժամանակահատվածում, և այս ժամանակահատվածում կրեդիտներ ապահովելու նպատակով մասնագիտական դասընթացների, սեմինարների, սիմպոզիումների, գիտական, գիտագործնական գիտաժողովների և համագումարների մասնակցությունը կարող է լինել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ այլ պետություններում, ինչը կարող է բուժաշխատողների համար գրավիչ լինել և հանգեցնել

չարաշահումների, ինչն էլ իր հերթին ծանրաբեռնվածության պատճառ կարող է դառնալ բժշկական հաստատությունների համար:

Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացի համակարգը ներդնելիս կառավարությունը բուժաշխատողի աշխատատեղի պահպանման, ինչպես նաև գործատուի կողմից աշխատավարձը վճարելու իմպերատիվ պահանջ չի սահմանել, դրանով իսկ ապահովելով գործատուի և բուժաշխատողի միջև ճկուն փոխհարաբերություն:

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում կատարվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացն իրականացնելու ժամանակահատվածում պահպանվում է բուժաշխատողի աշխատատեղը, իսկ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատավարձի պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գործատուի և բուժաշխատողի փոխադարձ համաձայնությամբ:»

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է սահմանել, որ շարունակական մասնագիտական զարգացման գործընթացն իրականացնելու ժամանակահատվածում պահպանվում են բուժաշխատողի աշխատատեղը, ստաժը, ինչպես նաև վարձատրությունը:

Մինչդեռ, նախագծի հիմնավորման «Ակնկալվող արդյունքը» հատվածում նշվում է՝ «Նշված հստակեցումները հնարավորություն կտան առողջապահության բնագավառի մասնագետներին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը, նաև աշխատողի աշխատանքային այլ իրավունքներ իրականացնելու ժամանակ կիրառել ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն առանց սահմանափակումների...»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է լրամշակել նախագծի հիմնավորման «Ակնկալվող արդյունքը» հատվածը՝ համապատասխանեցնելով այն նախագծով առաջարկվող կարգավորմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1016 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒՄ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-274-25.05.2022-ԱռՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

05.09.2022

ՆԱԽԱԳԻԾ

Պ-274-25.05.2022-ԱՌՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 2-րդ մասում՝

2-րդ մասը լրացնել հետեւյալ խմբագրությամբ նոր նախադասությունով.

« Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացը իրականացնելու ժամանակահատվածում պահպանվում են բուժաշխատողի աշխատատեղը, ստաժը, ինչպես նաեւ վարձատրությունը » :

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց մասնագիտական կարողությունների զարգացման, նոր ունակությունների եւ հմտությունների ձեռք բերելու ընթացքում, շարունակական մասնագիտական զարգացման, գնահատման եւ հավաստագրման գործընթացները կազմակերպելու ընթացքում բուժաշխատող-գործատու իրավահարաբերությունները կարգավորելու եւ նրանց աշխատանքային իրավունքի նորմերը եւ պայմանները հստակեցնելու նպատակից:

2. Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները.

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» գործող օրենքում բուժաշխատողների մասնագիտական զարգացման եւ կատարելագործման ընթացքում նոր

տեսական գիտելիքներ եւ գործնական հմտություններ ձեռք բերելու, շարունակական մասնագիտական զարգացման գործընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ ժամանակահատվածում հստակ չէ, թե ինչ իրավական հիմքով են ամրագրվում աշխատանքային պարտականությունների կատարումից ազատման եւ այդ օրերի համար աշխատավարձի վճարման, աշխատանքային ստաժի հաշվարկման եւ աշխատանքային իրավունքի այլ նորմեր :

3. Կարգավորման նպատակը եւ բնույթը.

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ առաջարկվում է բուժաշխատող-գործատու իրավահարաբերություններում ներդնել աշխատողի աշխատանքային ժամանակահատվածում մասնագիտական զարգացման, հավաստագրման եւ այլ իրավունքներ իրականացնելու ժամանակ վարձատրման, մասնագիտական գործունեության ստաժի հաշվարկման եւ երաշխավորված աշխատանքային գործունեությունը շարունակելու իրավական հիմքերը:

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող դրույթի նպատակն է ապահովել ՇՄՋ գործընթացի անընդհատությունը, հաշվի առնելով աշխատանքային իրավունքի նորմերը, ինչպես նաեւ բուժաշխատողի՝ ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն ստանալու գործընթացի ժամանակահատվածում երաշխավորել նրա աշխատատեղը, ստաժը, ինչպես նաեւ վարձատրությունը :

4. Ակնկալվող արդյունքը.

Նշված հստակեցումները հնարավություն կտան առողջապահության բնագավառի մասնագետներին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը, նաեւ աշխատողի աշխատանքային այլ իրավունքներ իրականացնելու ժամանակ կիրառել ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն՝ առանց սահմանափակումների, ապահովելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքային պայմանները: